ԲԱԺԻՆ 3. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀԴՏ 796.082.1 DOI: 10.53068/25792997-2023.1.8-88

ԿԱՐԱՏԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ա. Ս. Ղարախանյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սոցիալականացում, կենտրոնական արժեք, վերաբերմունք, արժեհամակարգ, կարատեի հանրույթ, սոցիալական վարք, դաստիարակություն, հոգևոր-գաղափարական մարդ:

Հետազոտության արդիականություն: Կարատեի հոգևոր–մշակութային դաշտում կարատեիստների սոցիալականացման ճանապարհը լի է հայ մարզիկների ինքնության ձևավորման անհամատեղելի ընկալումներով՝ պայմանավորված կրոնափիլիսոփայական արժեհամակարգերով [2]: Կարատեում գործող ավանդական հոգևոր դաստիարակության և գաղափարական համակարգերը հաշվի չեն առնում այլազգի մարզիկների ազգային պատկանելիության արժեհամակարգային գիտակցումը, և հայ մարզիկների սոցիալականացման վրա թողած նրա ազդեցությունների գործոնը, որը կարող է հանգեցնել ազգային գիտակցության գաղափարական խորը ճգնաժամի [3]: Այս երևույթից խուսափելու համար հայ սենսեյներից պահանջվում է ճանաչողական ուսուցումներով և արժեքային կողմնորոշիչներով իրագործել հայ դաստիարակելու իրենց նվիրական առաքելությունը և հայկական ոգու նկարագիր կերտելու բարձր պատասխանատվությունը, որի համատեքստով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ի հայտ բերել կարատեում հայ մարզիկների հոգևոր ակտիվությունն առաջացնող գործոնների շարժառիթները նրանց սոցիալականացման ճանապարհին, և այն փոխարինել ազգային կողմնորոշիչներով՝ հանուն ազգային ինքնության և գիտակցության:

Հետազոտության խնդիրներն են.

1. Արժեքային ներգործությամբ հայ կարատեիստների մոտ ձևավորել նոր շարժառիթներ և մոտիվացիաներ:

2. Հայ կարատեիստների վերաբերմունքի փոփոխման համար գործադրել ուսուցման համապատասխան մեխանիզմներ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծում, մանկավարժական դիտումներ, զրույց:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Կարատեն՝ որպես կրթական համակարգային մոդել, ներառում է կրթական երեք հիմնական գործառույթներ՝ մարզական, սոցիալականացման և անձի ձևավորման: «Սոցիալականացումը» կարատեում համապատասխան արժեքների, համոզմունքների և վերաբերմունքի փոխանցման մանկավարժական գործընթաց է, որտեղ անհատը մշակութային անհամապատասխանելիության դեպքերում ձեռք է բերում նոր ինքնություն և այդ լույսի ներքո աշխարհն ընկալում նոր հայացքներով:

Եթե հարցը դիտարկենք հայ կարատեիստների գործունեության ներքին շարժառիթների տեսանկյունից, ապա խոսքն այն մասին է, թե մշակութային տարածության մեջ նրանց վերաբերմունքի հուզական խտությունն ինչ լույսի ներքո է առավելապես կուտակվում և ինչպիսի արժեքներով է այն պայմանավորված: Սոցիալականացումը, ըստ էության, տեղի է ունենում ողջ կյանքի ընթացքում՝ կենտրոնական ազդեցություն թողնելով ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների վարքի, համոզմունքների և վերաբերմունքի վրա [13,1]: Կարատեիստների սոցիալականացման և նրանց հայացքների ձևավորման ճանապարհը լի է կարատեի ավանդական արժեհամակարգային ներգործություններով, որոնք ծառայում են որպես վարքի մոտիվացիա և կողմնորոշիչներ և, քանի որ մեր ուսումնասիրության և մտահոգության առարկան հայ մարզիկն է, ուստի պետք է բացահայտել նրա էության հոգևոր շարժառիթները, և այն զինել հայկական ոգու սպառազինությամբ՝ կրթելով և օժտելով հայի ինքնապահպան առաքինություններով: Հարց է առաջանում. իսկ ինչպիսի քայլեր են ձեռնարկվում այսօր հայ սենսեյների կողմից հայկական արժեհամակարգային դաստիարակության ուղղությամբ և ինչպիսի վերաբերմունք ունեն անձամբ նրանք այս հարցերի վերաբերյալ: Առանց բարդ վերլուծությունների էլ, որևէ դոձյոում (կարատի մարզադահլիճ) մարզումներ դիտելիս՝ կարող ենք գտնել մեր մտահոգիչ հարցերի պատասխանները՝ հասկանալով, թե ինչպես են սենսեյները, կամա թե ակամա, ոչ բավարար փաստական հիմքերի վրա օտար մշակութային արժեքներ

քարոզում և սաների մոտ ձևավորում համապատասխան վերաբերմունք: Թեև արժեքները հատկությամբ օժտված են կայունությամբ, սակայն սոցիալական վերաբերմունքին ուղղորդված փոփոխությունների արդյունքում այն երբեմն կարող է կազմալուծվել կրողի մտքում, որը կարող է հանգեցնել նաև արժեքների համակարգային փոփոխության: Այսպիսի փոփոխությունների գործնական կիրառությունը պայմանավորված է անձի հետաքրքրություններով և նրա համար ամենավեհ գաղափարներով: Թերևս այդպիսի վեհ գաղափարները և արժեքները կարող են հայ կարատեիստների համար ամենաանկանխատեսելի ներքին փոփոխությունների և սպորտային բարձր նվաճումների շարժառիթ դառնալ: Արժեքները գալիս են լայնածավալ ճանաչողական կառույցներից՝ այն կապելով տարբեր համոզմունքների և հատուկ վերաբերմունքների հետ [19, 4]: Ճանաչողությունը վերաբերում է սոցիալական աշխարհի մասին մեր մեկնաբանություններին և վերլուծություններին, ինչպես նաև նրանում մեր տեղը հասկանալու փորձերին [14], որը հիմնված է մտավոր գործընթացների և տեղեկատվության ուսուցման հայեցակարգի վրա: Արժեքները՝ ըստ առաջնահերթությունների, իրենց ներգործությամբ և պատճառականությամբ կարող են լինել տարբեր: Կարևոր արժեքների վրա հիմնված կամ դրանց վրա արտահայտված վերաբերմունքներն ընդլայնված հատկություններով վերաբերմունքներ են, որոնք առաջնորդում են վարքագիծը [11, 5]:

Սոցիալական հոգեբան Շալոմ Հ. Շվարցը մարդկային արժեքները սահմանեց որպես տրանսիրավիճակային նպատակներ՝ տարբեր կարևորությամբ, որոնք ծառայում են որպես առաջնորդող սկզբունքներ անձի կամ խմբի կյանքում [20]:

Թեև արժեքը, համոզմունքը և վերաբերմունքը, տարբեր հեղինակների կողմից բնորոշվել են տարբեր ձևակերպումներով և մեկնաբանությամբ, այնուամենայնիվ, տեղին եմ համարում տալ իմ հայեցակարգային սահմանումը՝ կարևորելով նրանց դերն ու նշանակությանը կարատեում: Կատարած ուսումնասիրություններս թույլ են տալիս հանգել այն համոզման, որ արժեքային վերաբերմունքը երևույթի և գաղափարի հանդեպ դրական կամ բացասական դատողություններն ու զգացմունքներն են, որոնք դրդում են մարդուն գործելու՝ հօգուտ բարձրագույն արժեքների՝ արտահայտելով մարդկային իմաստը, իսկ բարձրագույն արժեքը մարդկային իմաստն է և գլխավոր շարժառիթը մեր գործունեության: Ինչ վերաբերում է արժեքային համոզմունքներին, իմ ըմբռնմամբ այն կարելի է դիտարկել որպես արժեքի իս-

կության ընկալման ներքին վավերականություն և նախապայման՝ տվյալ արժեքի և վերաբերմունքի միջև փոխհարաբերություններ ձևավորելու համար: Իսկ այժմ պարզենք, թե հայ կարատեիստների գործունեությունը և վերաբերմունքն ինչպիսի արժեքների ներգործությամբ պետք է պայմանավորված լինի, և հասկանալ այդ արժեքների դերը մարդկային կյանքում: Քանի որ արժեքներն իրենց նշանակությամբ և ազդեցությամբ կարող են լինել տարբեր՝ պայմանավորված ձգտումներով և նպատակներով, ուստի գլխավոր շարժառիթը գտնելու համար այն պետք է փնտրել արժեքային հերարխիայի դասավորության մեջ և կողմնորոշվել այն արժեքներով, որոնք անձի գլխավոր են իմաստն են: Այս կապակցությամբ կատարված ուսումնասիրություններիս վեկտորը կցանկանայի ուղղել այն կողմ, որտեղ մարդու արժեքային ցանցի կառավարման առանցքը գտնվում է հոգևոր դաշտում, քանի որ իմ համոզմամբ և պնդմամբ, հոգևորն է այն մղիչ ուժը մարդկային կեցության մեջ, որից ճառագայթվում են մնացյալ բոլոր կարևոր արժեքները և, քանի որ, հայ կարատեիստը, առավել ևս հայ մարդը, իր ինքնությամբ չի կարող լինել հոգևորից դուրս՝ առանց հոգևոր գիտակցության, ուստի իմ ուսումնասիրության առարկան կուղղեմ այն արժեքները, որոնք իմաստավորում են հայի ինքնությունը, որը կարող է հայ կարատեիստների համար բացել ճանապարհ՝ կարատեի նոր մղումներով և ձեռքբերումներով: Ո՞րն է գլխավոր արժեքը հոգևոր մարդու համար: Այս հարցադրումը կյանքի իմաստաբանական երանգ ունի և ուղղակի կերպով շոշափվում է գոյաբանական այն հարցադրմանը, թե որն է մեր կյանքի իմաստը: Կյանքի իմաստի փնտրումը մեզ տանում է դեպի հոգևորը՝ մարդու սկզբնապատճառ, դեպի Աստված, իսկ մարդկային կյանքն առավել իմաստավորող արժեք, քան ինքն է՝ մարդու Արարիչը, գոյություն ունենալ չի կարող, որովհետև նրանով է հոգի առնում ամեն բան, որ սրբացված է և դառնում է ամենավեհը մեր կյանքում: Այժմ փորձենք գտնել այն ճանապարհները և մեթոդները, որոնք կփոխեն մեր վերաբերմունքը կարատեի արժեհամակարգային հարցերի շուրջ և կվերաիմաստավորեն մեր կյանքն ու կյանքի փիլիսոփայությունը: Ըստ շվեյցարացի հոգեվերլուծաբան Կառլ Յունգի՝ վերաբերմունքը «հոգեկանի պատրաստակամություն գործելու կամ արձագանքելու որոշակի ձև է»: Նա վերաբերմունքը դասակարգում է՝ որպես բացահայտ և անուղղակի [15]:

Քանի որ մեր ուսումնասիրության առարկան հայ մարզիկն է՝ պայմանավորված կարատեի արժեհամակարգային խնդիրներով, մենք մասնավորապես շեշ-

տադրել ենք վերաբերմունքի գիտակցական գործառույթները և նրա արժեքային կապը, որը վերաբերմունքի ուժի հիմնական չափանիշն է, քանի որ, արժեքները կարող են ուժ հաղորդել փոխկապակցված վերաբերմունքին և համապատասխան վարքագծին [17], [6]: Վերաբերմունքը բնածին երևույթ չէ, այն ձեռք բերած նախատրամադրվածություն է վերաբերմունքի օբյեկտին բարենպաստ կամ անբարենպաստ կերպով արձագանքելու համար» և որոշվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ գաղափարները, արժեքները, համոզմունքները, ընկալումը և այլն [22, 7]: Վերաբերմունքը փորձի կամ դաստիարակության արդյունք է և ունի օբյեկտ, որը կարող է լինել առարկան, գաղափարը, անձը կամ իրադարձությունը [9]: Ըստ հայտնի հոգեբաններ Ռոզենբերգի, Իգլինի և Հովլանդի՝ վերաբերմունքն օբյեկտի գնահատումն է, որն ունի աֆեկտիվ, վարքային և ճանաչողական բաղադրիչներ, և այն գիտության մեջ հայտնի է որպես ABC մոդել [12]: Օբյեկտի գնահատման վերաբերմունքի բաղադրիչները՝ ABC-ները, սովորաբար միմյանց հետ լինում են համահունչ, հետևաբար այսպիսի դեպքերում վերաբերմունքըն ունենում է նաև առաջնորդող դեր անձի և վարքագծի վրա:

Այսպիսի համահունչ հետևողականությամբ էլ պետք է իրագործել հայ կարատեիստների դաստիարակության ռազմավարական բոլոր ծրագրերը՝ վերահիմաստավորելով նրանց վերաբերմունքը կարատեի արժեհամակարգային հարցերի շուրջ, որը կունենա իր ազգային տեսլականը՝ ուրվագծված կարատեի նոր բարձունքներով: Երբ վերաբերմունքի ABC-ները միմյանց հետ գործում են համահունչ՝ վերաբերմունքը դառնում է ուժեղ, ինչպես օրինակ՝ կարատեիստների վերաբերմունքը սեփական մարզաձևի նկատմամբ, որտեղ համընդհանուր դրական է, քանի որ ունեն դրական մտքեր և զգացումներ իրենց մարզաձևի մասին և հակված են այնպիսի վարքագծի, որն աջակցում է կարատեի մշակույթին:

Վերաբերմունքն անհատի նախա–տրամադրված հոգեվիճակն է արժեքի վերաբերյալ [18], իսկ արժեքներն անձի ինքնորոշման համար կարևոր հատկանիշներ են, որոնք գործողությունները կարգավորող համակարգ և վերաբերմունքի արտահայտիչ են: Արժեքներն են կազմում մեր անհատականությունը և որոշում մեր «ով» լինելն ու վերաբերմունքն այս կյանքում: Իմ համոզմամբ մարդն իր էությամբ լինում է հոգևոր-գաղափարական կամ աշխարհիկ: Հոգևոր-գաղափարական մարդը նա է, ով իր կյանքն իմաստավորում է հոգևոր արժեքներով ու հոգևոր ապրումներով և պայքարում ու արարում է հանուն այդ արժեքների, իսկ աշխարհիկ մարդն առանց Աստծո մարդն

է, որն ապրում է առանց հոգևոր գիտակցության՝ հիմնվելով բացառապես նյութական աշխարհից բխող սկզբունքների և մտահոգությունների վրա: Հետևաբար, նրանց արժեքներն էլ պետք է առանձնանան նույն պատկանելիությամբ՝ հոգևոր և աշխարհիկ: Չէ՞ որ արժեքն այն է, ինչն արժևորում է մարդն իր կյանքում, իսկ հոգևոր-գաղափարական մարդու համար ամենակարևորը և կենտրոնականը՝ իր հավատքն է առ Աստված և նրանից բխող բոլոր կարևորությունները, որոնք հոգի են առնում և սրբագործվում՝ հայրենիք, ընտանիք, մայրենի լեզու և այլն: Ինչպես Տերյանն է ասում իր «Հոգևոր Հայաստան» հոդվածում՝ «Քննեցեք ձեր սիրտը և նայեցեք, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր այդ Հոգևոր Հայաստանը. եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար... Նա չի կենդանանա»: Մարդկային էության այս երկու բաժանարարների միջև, որպեսզի հիբրիդային շերտեր չփնտրենք, որովհետև այն կտանի անչափելի անորոշության, փորձենք այդ սահմանը զատել արժեքային կողմնորոշմամբ՝ օգտվելով գերակա արժեքի դոմինանտությունից:

Ինչպես հասկացանք, անկախ արժեքների տեսակներից, նրանք տարբեր են նաև իրենց ազդեցությամբ և մոտիվացիայով: Հետևաբար, շատերի կյանքում որևէ արժեքի նշանակությունը և կարևորությունը կարող է բարձր գնահատվել և ներկայացվել, սակայն այն իր դրսևորմամբ և ներգործությամբ մարդկանց կյանքում կարող է լինել անհամատեղելի տարբեր, ինչպես օրինակ՝ հայրենասիրությունից խոսող ամեն մարդ առանց գործերի դեռ հայրենասեր չէ, կամ հավատքից խոսող ամեն մարդ՝ հավատացյալ: Ինչպես ավետարանն է ասում «... հավատքն առանց գործերի մեռած է» (Հակոբոս 2:26), այնպես էլ արժեքն առանց գործերի կենդանություն չունի: Այն շատերի համար պարզապես սիմվոլիկ պարտադրված արժեքներ են, որոնց մասին միայն խոսում են, բայց երբեք այն իրենց չի պատկանում: Հետևաբար, գործերով պետք է գնահատել մարդու իրական պատկանելիությունը և նրա արժեքային կողմնորոշումն ու ազդեցության ուժը: Ուստի, ես կարծում եմ, որ արժեքներն, ըստ ազդեցության, ունեն երկու հիմնական կարգավիճակ՝ արժեքներ, որոնք գործնականում սիմվոլիկ են և ոչ կիրառելի, և արժեքներ, որոնք վարքի կողմնորոշիչ և մոտիվացիա են: Իմ գնահատմամբ այն արժեքները, որոնք կրողի համար սիմվոլիկ են, հանդես են գալիս որպես անգործ կամ պասիվ արժեքներ, իսկ այն արժեքները, որոնց վրա հղում է կատարվում վարքի կողմնորոշման համար, հանդես են գալիս որպես գործող կամ ակտիվ արժեքներ: Սովորաբար այն արժեքները, որոնց նկատմամբ

կրողն ունի սիմվոլիկ վերաբերմունք, հիմնականում ծառայում է որպես «ներկայացուցչական բարձր ազդեցություն»՝ որոշակի նպատակների հասնելու համար, և այն էապես չի արտահայտում նրա ներաշխարհը: Կարատեիստների մոտ ձևավորված կրոնափիլիսոփայական և գաղափարական վերաբերմունքը հանդես է գալիս որպես կարատեիստների գործողությունների մոտիվացիայի գործոն, սակայն այն հնարավոր է նաև փոխել հայեցողական և գաղափարական ներգործությամբ՝ նրանց մեջ ձևավորելով նոր շարժառիթներ և դրդապատճառներ՝ ի հայտ բերելով վարքային նոր մոտիվացիաներ, իսկ այս ամենը իրականացնելու համար պետք է գործադրել վերաբերմունքի փոփոխման համար ուսուցման համապատասխան մեխանիզմներ: Ուսուցման մեեխանիզմները կարող են բազմազան լինել՝ ունենալով իրենց դրական և բացասական կողմերը: Ժամանակակից գիտությունն այս համատեքստում սոցիալական վերաբերմունքի փոփոխության համար առաջարկում է ուսուցման հիմնական գլխավոր մեխանիզմները՝ բիհևիորիստական (վարքային), դիտողական պայմանավորվածության և ճանաչողական (կոգնիտիվ): Կատարված ուսումնասիրություններիս և վերլուծություններիս արդյունքում եկել եմ այն համոզման, որ կարատեում ավանդականն ազգային գիտակցությամբ վերաիմաստավորելու սոցիալական վերաբերմունքի փոփոխման կոգնիտիվ և դիտողական պայմանավորվածության մոդելներն ավելի կենսունակ են և արդարացված, քան բիհևիորիստական արտաքին փոփոխության մոդելները՝ հաշվի առնելով կարատեում մեկնաբանությունների և տրամաբանական բացատրությունների պակասը, և այն հանգամանքը, որ կարատեում համոզմունքների և վերաբերմունքի համապատասխանությունն օրինաչափ չէ, ինչպես նաև իմացական և հուզական բաղադրիչները փոխհամաձայնեցված չեն: Դիտորդական ուսուցման միջոցով անհատական վարքագիծը կարող է տարածվել մշակույթով՝ մի գործընթացի միջոցով, որը կոչվում է դիֆուզիոն շղթա: Սա հիմնականում տեղի է ունենում, երբ անհատը սովորում է վարքագիծ՝ դիտարկելով մեկ այլ անհատի, և այդ անհատը ծառայում է որպես մոդել, որի միջոցով այլ անհատներ սովորում են վարքագիծ [21]: Կարատեի մշակույթում դիտորդական ուսուցումը գերիշխող ուսուցման ոճ է, որտեղ սենսեյը դիտարկվում է որպես կողմնորոշիչ և ազդեցիկ մոդել: Այս մշակույթը ակնկալում է, որ երեխաներն ակտիվորեն զարգանան և ընդօրինակեն իրենց համայնքի ավանդույթներն ու սովորույթները և ձեռք բերեն տարբեր հմտություններ և գործելակերպ, որոնք գնահատվում և խրախուսվում են

տվյալ համայնքում: Սոցիալական ճանաչողությունը կենտրոնանում է այն դերի վրա, որ ճանաչողական գործընթացները խաղում են սոցիալական փոխազդեցություններում:

Ըստ կոգնիտիվ հոգեբանության ուղղության ուսումնասիրությունների՝ սոցիալական վերաբերմունքի փոփոխությունը կատարվում է այն ժամանակ, երբ օբյեկտի իմացական համակարգում անհամապատասխանություն է առաջանում: Այսպիսի իրավիճակ կարատեում կարող է ստեղծվել արժեհամակարգային բախումների արդյունքում, երբ սոցիալական վերաբերմունքը փոխելու խթան է անհատի ձգտումը, որը փորձում է վերականգնել իր կոգնիտիվ հավասարակշռությունը: Նմանատիպ հարցերի վերաբերյալ իր հոգեբանական լուծումներն է առաջարկում իմացական աններդաշնակության (կոգնիտիվ դիսոնանսի) «տեսությունը», որը, կապված Լեոն Ֆեստինգերի հետ, տալիս է սոցիալ-հոգեբանական մի շարք երևույթների բացատրություններ [8]: Իմացական աններդաշնակությունը սերտորեն կապված է ինչպես անձի սոցիալական վերաբերմունքի, այնպես էլ բազմաթիվ այլ հոգեկան երևույթների հետ: Որպեսզի կարատեում հայ մարզիկների մոտ հոգևոր և փիլիսոփայական հարցերի շուրջ ձևավորվեն հոգեբանական ներդաշնակություն, չափազանց կարևոր է նրանց վերաբերմունքի և վարքի փոխհամաձայնեցվածության հանգամանքը: Օրինակ՝ երբ հանդիպում ենք կարատեի ճանապարհին ուրվագծող օտար կրոնափիլիսոփայական արժեքներ թելադրող համակարգերի հետ, բախվում ենք ներքին հակասությունների, երբ հասկանում ենք, որ մեր մտքերում կրում ենք տարբեր, անհամատեղելի գաղափարներ կարատեի և ազգային հոգևոր հարցերի վերաբերյալ:

Այն գիտակցությունը, որ կարատեի հոգևոր հայացքներում առկա են մեր ինքնությանը սպառնացող գաղափարական վտանգներ՝ մեր հոգեկանում ստեղծվում է աններդաշնակություն, որից փորձում ենք <<աննկատ>> ազատագրվել <<որևէ հաշտության եզր գտնելու ճանապարհով>>: Սակայն խնդիրն այն է, որ իրականում նման եզրեր գոյություն ունենալ չեն կարող, երբ խոսքը վերաբերում է քո հավատքին և նրանից բխող հայացքներին: Ավետարանում գրված է. «Երանի դու սառն լինեիր և կամ տաք. իսկ դու գաղջ ես՝ ո՛չ տաք, ո՛չ էլ սառն. հիմա պիտի փսխեմ քեզ Իմ բերանից, չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ և աղքատ, մերկ և կույր» (Հայտ. 3.15.16): Հետևաբար, մնում է երկու ճանապարհ. կամ ստեղծել կեղծ իմիտացիա ներդաշնակության առկայության մասին՝ ինքնահամոզմամբ ձևավորելով թվացյալ անհակասական գնահատականներ, կամ

արմատապես ազատագրվել հոգեբանական աններդաշնակությունից՝ առաջնորդվելով հետևյալ սկզբունքներով.

1.Փոխել կարատեում անհամատեղելիություն առաջացնող իմացական տարրերի կրոնափիլիսոփայական կոգնիցիաների գաղափարական մոտեցումները և նրանց հանդեպ ընդունված վերաբերմունքը (օրինակ՝ կարատեն ընդունել միայն մարզաձև):

2.Աններդաշնակությունը՝ վերացնել աններդաշնակ վարքի արմատական փոփոխություններով (օրինակ, եթե հայ մարզիկը թողնի կարատեում առկա խորհրդաբանական և արարողակարգային սովորություններ արտահայտող անցանկալի վարքագիծը): Այս սկզբունքները, իհարկե, հոգեբանորեն հարմարավետ վիճակ են, սակայն առավել աշխատատար և երբեմն անհաղթահարելի, երբ մարդը հենվում է որոշակի արժեքներ արտահայտող գիտելիքների հարթության վրա, և այդ հարթությունն ուղղակիորեն կապված է նրա վարքագծի կենտրոնական նպատակի հետ, ինչպիսին կարող է լինել, օրինակ՝ կարատեիստների համար կարատեն, այդ մարդը կարող է էգոպաշտպանական կեցվածք ընդունել այդ արժեքներին սպառնալից վերաբերմունք արտահայտող բոլոր տեսակի ճշմարտությունների դեմ: Այս երևույթը կարատեիստների կողմից կարող է անգամ դիտարկվել որպես ինքնագնահատականի կամ անձնական ձախողումների լրջագույն վտանգ, որովհետև առաջ է գալիս անձի ինքնագիտակցության նոր մոդել, որը կասկածի տակ է առնում այն ճանապարհը, որը որդեգրված էր մինչ այդ կարատեում՝ որպես կյանքի ճշմարիտ ուղի: Կարատեիստների կենսագործունեության օրինաչափությունների բացահայտումն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է նրանց վարքի շարժառիթների լիարժեք իմացության համար: Կարատեում վարքի սկզբունքների ձևավորումը պայմանավորված է նրանում տեղի ունեցող սոցիալական գործընթացներում մարզիկների հրահանգավորված դերային կատարումներով, սովորույթի ուժով ձևավորված ենթագիտակցական սոցիալական վերաբերմունքով, հավատալիքներով, մարզական ակնկալիքներով և այլն: Իսկ դա նշանակում է, որ կարատեում սոցիալական վարքի շարժառիթների ամբողջական հայեցակարգի բնորոշումը հնարավոր է տալ միայն հիմնախնդրի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունների և սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքում՝ հասկանալու համար ուսումնասիրվող օբյեկտի բացահայտ (գիտակցական) վերաբերմունքը: Այս հիմնախնդրին պետք է մոտենալ սոցիալ-մշակութային գործոնների համատեքստում՝ պարզելով, թե տվյալ կարա-

տեիստն իրեն ինչ տեղ ու դեր է հատկացնում տվյալ հասարակության մեջ, որ սոցիալական խմբի հետ է նույնականանում և վերագրում իր պատկանելիությունը, ինչ արժեքներ է կրում և այլն:

Սոցիալական նույնականությունը նաև ինքնության ձևավորման գործընթաց, և կարատեիստը, իրեն նույնականացնելով կարատեի մշակութային համակարգին, ձեռք է բերում տվյալ ինքնության համապատասխան որակներ:

Համակարգային փոխակերպումների ընթացքում այն մարզիկները, որոնք չունեն ազգային արժեքային կողմնորոշումներ և համապատասխան գիտելիք և գիտակցություն, աննկատ մարգինալացվում են՝ սոցիալական մեկ կարգավիճակից անցնելով մեկ այլ կարգավիճակի՝ ինտեգրվելով կարատեի արժեքային կողմնորոշումների նոր համակարգ, որի իրագործողներն են կարատեի հիերարխիայի բարձրագույն հեղինակությունները, ‹‹որոնք առաքվել են լուսավոր և անքննելի ճշմարտություններից››: Սակայն, որևէ բանի հավատալը, որ անհրաժեշտորեն ճշմարիտ է, չի ամրագրում այն փաստը, որ իրապես ճշմարիտ է և հուսալի: Շատ դեպքերում, ժամանակի ընթացքում անձի վարքի հետևողականությունը անհատականության և մոտիվացիոն գործոնների արդյունք է դառնում [16]: Այն կարող է արտացոլել վարքագծի հետևանքների վերաբերյալ նախորդ փորձառությամբ ձեռք բերած համոզմունքների ազդեցությունը: Այլ կերպ ասած՝ մարդիկ կարող են օգտագործել իրենց անցյալի վարքագիծը՝ որպես էվրիստիկ հիմք իրենց հետագա որոշումների համար: Ուստի, այդ իրավիճակից դուրս գալու և հայ մարզիկների նույնականության ճգնաժամը հաղթահարելու միակ տարբերակը նոր դաստիարակչական ազգային մոդելի ներդրումն է կարատեում, որը կներկայացվի մեր հետագա աշխատանքներում:

Եզրակացություն: Ինքնության ձևավորման ճանապարհին կարատեիստները նույնականացվում և սոցիալիզացվում են այն արժեքներով, որոնք կրում են իրենց սենսեյները և կրոնափիլիսոփայական սոցիալականացմամբ ձեռք բերում կարատեի ինքնության համապատասխան որակներ: Կրոնական սոցիալականացումն այն գործընթացն է, որի միջոցով անհատը սովորում և ներքինացնում է կրոնական համոզմունքները, վերաբերմունքը, արժեքները և վարքագիծը [10]: Սենսեյի խոսքը սաների մոտ ընկալվում է այնքանով, ինչքանով հնչեցվում է՝ առանց բացատրությունների տրամաբանական պահանջի՝ ձևավորելով վերաբերմունք տարբեր երևույթների հանդեպ, որոնց բուն էությունը շատ հաճախ մնում է անհայտ և անհասկանալի, որի բացակայությունը, սակայն, լրացվում է սենսեյի

հեղինակությամբ: Կարատեիստների վերաբերմունքի և նրա սոցիալիզացման վրա ճանաչողական մեծ ազդեցություն ունի սենսեյի խոսքը, որն ունի ուսուցողական բաղադրիչ և կարող է լինել և՛ պտղաբեր, և՛ կործանարար, քանի որ խոսքով են իմաստավորվում և մերժվում գաղափարները: Ուստի, պետք է զգուշավոր լինել ամեն տեսակ կամայական անբովանդակ դատողություններից և անպտուղ խոսքերից, որոնք կարող են սերմանվել և սաների մոտ ձևավորել սխալ վերաբերմունք: Աշակերտը, ուսուցչից լսելով կարատեի արժեհամակարգային մեկնաբանություններ, ինքը ևս դառնում է նույն վերաբերմունքի կրողը և անձի կազմավորման և սոցիալիզացման այս գաղափարական սերմերով կերտվում է՝ որպես կյանքի առաքելություն ստանձնած վաղվա քաղաքացի: Ուստի, այդ իրավիճակից դուրս գալու և հայ մարզիկների սոցիալ-նույնականության ճգնաժամը հաղթահարելու միակ տարբերակը նոր դաստիարակչական ազգային մոդելի ներդրումն է, որի ռազմավարական ծրագիրը պետք է թելադրի հետևյալ սկզբունքները.

1.Փոխել կարատեում մեր ազգային ընկալումների հետ անհամատեղելիություն առաջացնող իմացական տարրերի կրոնափիլիսոփայական կոգնիցիաների գաղափարական մոտեցումները և նրանց հանդեպ ընդունված վերաբերմունքը:

2.Աննրդաշնակությունը վերացնել՝ աննրդաշնակ վարքի արմատական փոփոխություններով (օրինակ՝ եթե հայ մարզիկը թողնի կարատեում առկա խորհրդաբանական և արարողակարգային սովորություններ արտահայտող անցանկալի վարքագիծը, որոնք հարիր չեն մեր ազգային մտածողությանը, կմնա ներդաշնակ և անդավաճան իր ազգային հոգևոր արմատներին):

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չատինյան Ա.Ա., Սպորտային մանկավարժական գիտություն, 43-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2016, էջ 296-300:
2. Ղարախանյան Ա.Ս., Հանրապետական XXXXII գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2015, էջ 198–201:
3. Ղարախանյան Ա.Ս., ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան, № 2 (3), Երևան, 2020, էջ 88–92:
4. Алтунина И.Р., Социальная психология: Учебник / И.Р. Алтунина, Р.С. Немов. - Люберцы: Юрайт, 2015.

5. Андреева Г.М., Социальная психология: Учебник / Г.М. Андреева. - М.: Аспект-Пресс, 2016.
6. Денисова Ю.В., Социальная психология. / Ю.В. Денисова, Е.Т. Имашева. - М.: Омега-Л, 2018.
7. Корягина Н.А., Социальная психология. Теория и практические методы: Учебник / Н.А. Корягина. - Люберцы: Юрайт, 2016.
8. Фестингер, Леон. Введение в теорию диссонанса. — СПб: Ювента, 1999.
9. Albarracín, D., Johnson, B. T., & Zanna, M. P. (Eds.). (2005). The handbook of attitudes. Mahwah, NJ
10. Bengtson VL, Copen CE, Putney NM, & Silverstein M (2009). A longitudinal study of the intergenerational transmission of religion. International Sociology, 24(3), 325–345
11. Boninger D. S., Krosnick J. A., Berent M. K. (1995). Origins of attitude importance: self-interest, social identification, and value relevance. Journal
12. Breckler, SJ. "Empirical validation of affect, behavior, and cognition as distinct components of attitude". 1984, Journal of Personality and Social Psychology.
13. Encyclopædia Britannica MLA Style: "socialization." Encyclopædia Britannica Student and Home Edition. 2010, Chicago:
14. Fiske, S. T., & Taylor, S. E. Social Cognition: From Brains to Culture. 2008, Boston, MA:
15. C. G. Jung and the scientific attitude Hardcover – January 1, 1974 by Edmund D Cohen .
16. Harcourt Brace, Eagly AH, Chaiken S. The psychology of attitudes. San Diego, CA:; 1993.
17. Holbrook A. L., Berent M. K., Krosnick J. A., Visser P. S., Boninger D. S. 2005. Attitude importance and the accumulation of attitude-relevant knowledge in memory. J.
18. Richard M. Perloff, The Dynamics of Persuasion: Communication and Attitudes in Twenty-Ist Century , Routledge, 2016.
19. Schwartz S. H. “Universals in the content and structure of values: Theoretical advances and empirical tests in 20 countries,” in Advances in Experimental Social Psychology, ed. Zanna M. P. 1992, Cambridge, MA: Academic Press.
20. Schwartz SH, Cieciuch J, Vecchione M, Davidov E, Fischer R, Beierlein C, et al. Refining the theory of basic individual values. Journal of personality and social psychology. 2012.
21. Schacter, Daniel L.; Gilbert, Daniel Todd; Wegner, Daniel M. Psychology (2nd ed.). 2011, New York, NY: Worth Publishers.

22. Title Predicting and Changing Behavior: The Reasoned Action Approach A Psychology Press book Authors Martin Fishbein, Icek Ajzen Editionillustrated PublisherPsychology Press, 2010.

THE SOCIALIZING FUNCTION OF KARATE AMONG ARMENIAN KARATEKAS

A. S. Gharakhanyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: Socialization, main value, attitude, value system, karate community, social behavior, education and upbringing, spiritual and ideological personality.

Research relevance: The spiritual-cultural field of karate and the socialization process for Armenian athletes is full of contradictions due to the religious-philosophical value systems.

The spiritual education and ideological systems in karate do not consider the value systems of foreign athletes and the impact it might have on the socialization of Armenian athletes which can lead to losing national identity and culture.

To avoid this Armenian sensei should use cognitive training and national values, which will have Armenian national identity, in realizing his mission of educating athletes. The relevance of the current research is based on the above-mentioned statement.

Research aim: to reveal the motives activating the spiritual factors of Armenian athletes and to replace them by national motives in benefit of national identity and consciousness.

The research problems:

1. To develop new motives among Armenian athletes by using the impact of national values
2. To use appropriate educational tools and mechanisms to change the attitude of Armenian athletes

Research methods and organization: The research methods are the study and the analysis of scientific-methodical literature, pedagogical observations, conversation.

Analysis of the results obtained: As a result of the conducted research and generalizations, the cultural model of karate as a sport is determined. It includes three functions -sports, socialization and formation of an individual. Obviously, Armenian

specialists, taking into account the system of value relations, should preserve the national identity of cultural manifestations in the training process.

Conclusion: In the process of developing identity the athletes aquire values from their sensei and get the appropriate skills of karate. The only way to prevent the loss of national identity is the implementation of a new national educational model based on the following principles:

1. To change the ideologictal approaches of religious-philosophical cognitions and attitudes which contradict our national perceptions of karate.
2. To eliminate the inconsistency by radically changing the behavior.

СОЦИАЛИЗИРУЮЩАЯ ФУНКЦИЯ КАРАТЭ СРЕДИ АРМЯНСКИХ КАРАТИСТОВ

А. С. Караханян
Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: социализация, основная ценность, позиция, система ценностей, каратэ-сообщество, социальное поведение, воспитание, духовно-идеологическая личность.

Актуальность исследования. Духовно-культурное поле каратэ и процесс социализации армянских спортсменов полны противоречий из-за религиозно-философских систем ценностей.

Духовное образование и идеологические системы в карате не учитывают системы ценностей иностранных спортсменов и их влияние на социализацию армянских спортсменов, что может привести к утрате национальной идентичности и культуры.

Чтобы избежать этого, в реализации своей миссии воспитания спортсменов армянский сэнсэй должен использовать познавательную подготовку и национальные ценности, которые основаны на армянский национальной идентичности. Актуальность данного исследования основывается на вышеуказанном утверждении.

Цель исследования. Выявить мотивы, активизирующие духовные факторы армянских спортсменов, и заменить их национальными мотивами на пути к социализации в пользу национальной идентичности и сознания.

Задачи исследования:

1. Развить новые мотивы среди армянских спортсменов, используя влияние национальных ценностей.

2. Использовать соответствующие образовательные инструменты и механизмы для изменения отношения армянских спортсменов.

Методы и организация исследования: изучение и анализ научно-методической литературы, педагогические наблюдения, беседа.

Анализ полученных результатов. В итоге проведенных исследований и обобщений определена культурная модель карате как вида спорта. Она вбирает в себя три функции-спортивную, созиализации и формирования личности. Очевидно, армянские специалисты, учитывая систему ценностных отношений, должны сохранять национальную идентичность культурных проявлений в тренировочном процессе.

Краткие выводы: в процессе развития идентичности спортсмены от сенсея получают ценности и соответствующие навыки карате. Единственный способ предотвратить потерю национальной идентичности — это реализация новой национальной образовательной модели, основанной на следующих принципах:

1. изменить идеологические подходы религиозных философских познаний и взглядов, которые противоречат нашему национальному восприятию каратэ.

2. устранение несоответствия путем радикального изменения поведения.

Տեղեկություններ հեղինակի մասին

Արման Սարգսի Ղարախանյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: arman. karakhanyan@sportedu.am, ORCID: 0000-0002-5711-5584,

Information about the author

Arman Sargis Gharakhanyan-Associate Professor, Professor of the Chair of Wrestling and Eastern Martial Arts, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: arman.karakhanyan@sportedu.am, ORCID: 0000-0002-5711-5584

Հոդվածն ընդունվել է 14.02.2023–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 15.02. 2023–ին:
Գրախոս՝ կ.գ.թ., դոցենտ Լ. Ստեփանյան